Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11003/25-ԱՑ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 2

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 3. Արարատ– ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025 - 31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.04.2025 -30.06.2025թթ. |
| Ներկայացման օր | 03.07.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում** սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 42 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ:
- **Ազատ ժամանցի կազմակերպման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը մանր եւ խոշոր մոտորիկայի, ուշադրության կենտրոնացման, հիշողության զարգացմանն ուղղված խաղերի, ակտիվացնող պարերի, կապերի ընդլայնման, հյուրերի ընդունելության, հեռուստադիտումների, ընթերցանության և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 6 խմբակ, որոնց մասնակցել է 40 շահառու:
  Կենտրոնում գործող խմբակներն են՝
    - ✓ Երգ,
    - ✓ Առողջարար ֆիզկուլտուրա,
    - ✓ Գրական ակումբ,
    - ✓ Կինոդարան,
    - ✓ Հմուտ ձեռքեր,
    - ✓ Ընթերցանություն:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - ✓ Կազմակերպվել է թվով 12 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է թվով 42 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝ Մայրության և գեղեցկության օր, Սուրբ Զատիկ, այց Հայաստանի բնության պետական թանգարան, Հաղթանակի օր, Առաջին Հանրապետության օր, էքսկուրսիա դեպի Էջմիածին և Սարդարապատ, այց Պարույր Սևանի տուն թանգարան, շահառուների ծննդյան տարեդարձերի նշում (5 անգամ):
  - ✓ Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի «Խոհարարական գործ» մասնագիտության ուսանողների հյուրընկալում:

- **Աշխատանքային/արտթերապիայի կազմակերպման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում թվով 35 շահառու մասնակցել է հոգեբանի կողմից իրականացված 7 խմբային հանդիպումներին: Հանդիպումները նվիրված են եղել տարեցների իմացական ֆունկցիաների մարզմանը, գլխուղեղի աշխատանքի խթանմանը: Իրականցվել են նեյրոբիկայի, հիշողության և ուշադրության կենտրոնացման բարելավման վարժություններ: Խմբային հանդիպումների ժամանակ կիրառվել են արտթերապիայի վարժություններ և տեխնիկաներ, ինչպես օրինակ՝ «Կյանքը որպես ճանապարհ», «Ազատ ստեղծագործություն», «Տրամադրության պատկեր», «Ձեր կերպարը», «Տրամադրություն», «Հոգու գույները», «Հեռվում»: Իրականացվել են նաև խմբային ինտերակտիվ քննարկումներ հետևյալ թեմաներով՝ ինքնագնահատական, ինքնախնամք, հուզական ոլորտ:
- **Սննդի տրամադրման շրջանակներում** յուրաքանչյուր օր կենտրոնում սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:
- **Այլ ծառայություններ**
  Հաշվետու ժամանակահատվածում «Լույս հայի աչքերին» ծրագրի շրջանակներում ցերեկային կենտրոն հաճախող 32 շահառու անցել է ակնաբուժական զննում:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ մշակված նյութերը.

- էքսկուրսիա դեպի Պարույր Սևակի տուն-թանգարան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/story.php?story_fbid=729337069800008&id=100081711650427&rdid=t9HC98biFBF8cmEP#),
- այց Հայաստանի բնության պետական թանգարան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/story.php?story_fbid=677965041603878&id=100081711650427&rdid=MwEvTX0vRDK9F5kB#),
- Մայրության և գեղեցկության օր (տե՛ս հետևյալ հղմամբ՝ https://www.facebook.com/story.php?story_fbid=666247059442343&id=100081711650427&rdid=THIaByBhTDdIAfcQ#):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**
Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- բաղնիքի ծառայության տրամադրում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար**

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 40/42 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 32 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 8 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 7 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 8 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 34 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | - |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 42 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 35 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 42 |
| 5.1 | Երգ | 15 |
| 5.2 | Ընթերցանության ակումբ | 10 |
| 5.3 | Առողջարար ֆիզկուլտուրա | 13 |
| 5.4 | Կինոդարան | 7 |
| 5.5 | Հմուտ ձեռքեր | 5 |
| 5.6 | Ընթերցանություն | 11 |
| 6. | Մշակութային միջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 42 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 32 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) Ակնաբուժական հետազոտություն | 32 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* 03.07.2025թ.

(ստորագրություն, անուն,ազգանուն)